ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՍԱՀԱԿՅԱՆ Լ.Զ.*

Երբ 1935 թվականին Փարիզի Վիլ Ժուիֆ հոգեբուժարանում դադարեց բաբախել հայ երաժշտության հանճար Կոմիտաս վարդապետի սիրտը, խորհրդային երկրի մայրաքաղաք Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում հնչեց Արամ Խաչատրյանի սիմֆոնիան՝ նոր ժանր ու խոսք հայ դասական երաժշտության մեջ: Ա. Խաչատրյանի տաղանդը փայլատակեց, և հայկական նոր կոմպոզիտորական արվեստը շարունակեց զարգանալ այն բնուղիով, որ նախանշել էր Կոմիտաս վարդապետը:

Չնայած հայ երաժշտագետներից և կոմպոզիտորներից շատերն են արձանագրել Կոմիտաս-Խաչատրյան առնչությունները, այդուհանդերձ, հայ երաժշտագիտության մեջ տարիներ շարունակ միտում կար տարբեր տեսանկյուններով դիտարկել Կոմիտաս վարդապետի և Ա. Խաչատրյանի ժառանգական կապը[1]: Մեր կարծիքով, Կոմիտաս-Խաչատրյան առնչութ-

---

* Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, lusine_sahakyan72@mail.ru, հոդվածի ընդունման օրը՝ 17.12.2018, գրախոսման օրը՝ 2.12.2018:

[1] Այդ առնչությունների բացահայտման լավագույն օրինակներից են կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի, երաժշտագետներ Գեորգի Տիգրանովի, Գեորգի Գյոդակյանի, Նիկողոս Թահմիզյանի, Մարգարիտ Ռուխկյանի հոդվածներն ու ուսումնասիրությունները: Հատկապես ուշագրավ են Ալդա Գրիգորյանի, Գայանե Չեբոտարյանի դիտարկումները՝ կապված, մասնավորապես, Կոմիտասի և Խաչատրյանի առնչությունների, երաժշտության ազգային ակունքների բացահայտման շուրջ: Նշում են, օրինակ, ընդհանրությունները գեղարվեստական կերպարի հարցում կամ Ջութակի կոնցերտի երկրորդ մասի կապը միջնադարյան տաղերի, Կոմիտասի «Քելե, քելե» երգի կրկներգի հետ և այլն: Տե՛ս **Арам Хачатурян,** составитель Г. Геодакян, ред. Г. Геодакян, Р. Степанян, изд. АН Арм. ССР, Е., 1972, с. 176. Տե՛ս նաև **Մանսուրյան Տ.**, Նրա հետ օրեօր (Խորհրդային Հայաստան, 21.11.1989, h. 269, էջ 6): **Григорян А.** Живая плодотворная традиция (Советская музыка, 1981, N 2, с. 118). **Чеботарян Г.** Полифонический язык А. Хачатуряна, Арам Хачатурян, составитель Г. Геодакян, ред. Р. Степанян, изд. АН Арм. ССР, Е., 1972, с. 85-113. **Чеботарян Г.** Полифония в балете Арама Хачатуряна

յան նորովի ու համակողմանի դիտարկումը հայ երաժշտագիտության առանցքային հիմնահարցերից է: Մեր հոդվածի շրջանակները թույլ չեն տա հնարավոր ամբողջությամբ ներկայացնելու Կոմիտաս վարդապետ-Արամ Խաչատրյան ստեղծագործական առնչությունները, դիտարկելու նրանց գիտական կենսագրության մանրամասները կամ ընդհանրություններ: Կարելի է փաստել՝ երկուսն էլ կոմպոզիտոր, մանկավարժ, կատարող, երաժշտա-հասարակական գործիչ էին: Ե՛վ Կոմիտասի, և՛ Խաչատրյանի յուրաքանչյուր ստեղծագործություն իրադարձություն էր, երկուսն էլ ձգտեցին հայ երաժշտությունն արժանացնել (ինչո՞ւ չէ, նաև արժանացրին) համաշխարհային ճանաչման: Երկուսն էլ ունեին հստակ հայեցակարգ՝ կապված հայ մշակույթի, երաժշտության մեջ ազգայինի գիտակցության հետ... Այս մոտեցումները կարող են ստեղծել հանճարներին արհեստականորեն իրար կապելու միտում: Բայց նրանց կապն ավելի խորն է ու բազմաշերտ:

Հանճարը, նրա կյանքի ուղին և ստեղծագործությունը միշտ էլ անբացատրելի մի խորհուրդ են թաքցնում իրենց մեջ:

Որպես կարևոր առաքելություն ունեցող մեծություններ՝ Կոմիտասը և Ա. Խաչատրյանը կապված էին իրենց շրջապատող աշխարհին ու իրականությանը, սնվում էին ժողովրդական արմատներից, որոնք հասնում էին մինչև հայոց էպոս ու քնարերգություն, բնապատկերներ ու պատմություն, մինչև Հայաստան-դրախտավայր՝ Գողթան հարստագույն երգեր:

Նույնն էր արմատը, և տարբեր էին ճակատագրերը: Իրենց առաքելությունը կատարելապես իրագործելուն վարդապետին թերևս խոչընդոտում էր կղերականությունը, Ա. Խաչատրյանին՝ խորհրդային ամբողջատիրական գաղափարախոսությունը՝ ֆորմալիզմին առնչվելու անհեթեթ մեղադրանքներով:

Մեր կարծիքով, Կոմիտաս վարդապետի և Ա. Խաչատրյանի արվեստը կարելի է քննել՝ հիմնվելով միմիայն իրենց տեսակետների վրա՝ երաժշտության ակունքների խոր ուսումնասիրմամբ: Քանզի Կոմիտասի արվեստում ազգային հենքը միայն գեղջուկ երգը չէ, այլև իրեն հարազատ

«Спартак» («Известия» Академии наук Арм. ССР, N 6, 1959, с. 17-39). **Чеботарян Г.** Полифония в творчестве Арама Хачатуряна, Е., 1969). **Джагацпанян К.** Арам Хачатурян и вопрос национального (Арам Хачатурян и музыка XX века, Е., 2003, с. 41-46),**Саркисян С.** Арам Хачатурян. Научно-справочное издание, Е., 2004) **Саркисян С.** На рубеже веков. Музыка и ее сферы. Арам Хачатурян и его время, М., 2014, с. 357.

հոգևոր երգասացությունը. հայ երաժշտության այդ երկու ճյուղերը, իր իսկ բնորոշմամբ, «քույր ու եղբոր» ազգակցություն ունեն[2]:

Խաչատրյանի ազգայինի հիմքերում տեսնել միայն աշուղական երաժշտությունը, նույնպես միակողմանի է: Խաչատրյանական երաժշտության բազմաթիվ էջեր իրենց հարուստ մեղեդայնությամբ հասնում են մինչև հայ միջնադարյան մոնոդիա:

«Խաչատրյանի ստեղծագործությունը լիարժեք կերպով ժառանգեց հարազատ ժողովրդի մշակույթը, այդ թվում՝ երաժշտական... Այդ բնագավառում նա ուներ փառավոր նախորդներ՝ առաջին հերթին Կոմիտասը...», - գրում է Գ. Գյոդակյանը[3]: Անտարակույս, հայրենիքն ու ակունքները կարևոր են: Թերևս, համահավաք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հայ երաժշտության երկու հանճարների՝ Գողթան գավառի երկու երգիչների արվեստի արմատներն ու հարատևությունը հիմքերից բացահայտել, որտեղից ձևավորվում է ստեղծագործական սկզբունքների ամբողջությունը, գեղագիտական հայացքների համակարգը, հայ ժողովրդի պատմական անցյալով ձևավորված գենետիկ հիշողությունը:

Գողթան գավառի հարուստ մշակույթին հակիրճ անդրադարձել է երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանը[4]: Մեր դիտարկումը միտված է առավել հետևողականորեն բացահայտելու երկու կոմպոզիտորների ստեղծագործական կապը:

«Ամեն անգամ Կոմիտասի մասին մտածելիս ես տեսնում եմ հայրենիքս...», - գրում էր Արամ Խաչատրյանը[5]: Հավելենք նաև մեծն Գյոթեի խոսքը. «Պոետին հասկանալու համար պետք է տեսնել նրա հայրենիքը»:

Իր ու Կոմիտասի հայրենիքը... Հայոց լեռնաշխարհի Ուրարտու պետության տարածքի մեջ էր Գողթն գավառը՝ «Վիշապազունք» սերնդի հայ-

---

[2] **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրություններ և յոդուածներ, գիրք Ա, Ե., 2005, էջ 93:

[3] **Գյոդակյան Գ.**, Էջեր հայ երաժշտության պատմությունից, Ե., 2009, էջ 121:

[4] Տե՛ս **Худабашян К.** Певцы страны Гохтан, Արամ Խաչատրյանը և XX դարի երաժշտությունը, Ե., 2003, էջ 47-55; նաև **Худабашян К.** Певцы страны Гохтан(Музыкальная Академия, 2005, N 1, с. 144-146):

[5] Արամ Խաչատրյան՝ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը (Սովետական արվեստ», 1969, h. 10, էջ 1-2):

րենիքը[6]: Շնորհալի երաժիշտների, երաժշտական կրթության ու դաստիարակության դարավոր ավանդույթների, հայոց պատմության ու մշակույթի համար ականավոր գործիչների բնօրրան էր Գողթան գավառը: Այն աչքի էր ընկնում գուսանների ու վիպասանների բացառիկ արվեստով, որոնք մշակույթի և գիտության մարդիկ էին: Գավառի գուսաններն ու վարձակներն իրենց երգերով, պարերով, զրույցներով ներկայացրել ու սերնդեսերունդ փոխանցել են դիցաբանական–առասպելաբանական, թատերականացված պատմություններ՝ քնարով և բանաստեղծություններով անմահացնելով «Հայոց քաջերի և թագավորների արիության գործերը». դա վկայում են և՛ նյութական մշակույթի հուշարձանները, և՛ պատմագրական աղբյուրները[7]: Անգամ Գողթն բառի ստուգաբանությունը նշանակում է պատմություն, երգ, վիպասանություն, գեղգեղանք…

Հայոց պատմությունը գրելիս Մովսես Խորենացին օգտվել է Գողթնի ժողովրդական զրույցներից ու երգերից. դրա վառ օրինակն է դեռևս հեթանոսական շրջանից պահպանված Վահագնի ծնունդին նվիրված գեղեցիկ դյուցազներգությունը: Մեսրոպ Մաշտոցը դեռևս գրերի գյուտից առաջ հայրենի գիր ու գրականություն է ուսուցանել, դպրություն է ծավալել Գողթն գավառում, որտեղ դարեր ի վեր զարգացած է եղել ազգային մշակույթը՝ «կռապաշտական երգերն ու զրույցները»: Այս գավառի լեռնային մի գյուղում Մաշտոցը վանք է կառուցել, որն իր անվամբ կոչվել է Մասրեվան՝ Մեսրոպավան (Հ. Ղևոնդ Ալիշանը, Երվանդ Լալայանը, Հրաչյա Աճառյանը որպես ուխտատեղի այցելել են այդ վանքը)[8]: Եվ անգամ կարելի է ենթադրել, թե Գողթնում եղել է դիցաբանական կամ քրմական դպրոց, որ ակնարկում է Մ. Խորենացու հետևյալ խոսքը. «Երթալ/Մեսրոպայ/ ՛ի գաւառն Գողթան՝ որ ՛ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական յաւուրցն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, զայն եբարձ օգնականութեամբ իշխանի գավառին. որում անուն էր Շաբիթ»[9]:

---

[6] «Վիշապազունք» սերունդ: Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ը, Ե., 1985, էջ 180: «Վիշապ ժողովրդի մեջ հին ժամանակներից ի վեր նշանակում է փոթորիկ կամ ամպրոպային ամպ»: Տե՛ս նաև **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Է, Ե., 1975, էջ 117:

[7] Տե՛ս **Հախնազարյան Յ.**, Գողթան գաւառ (Պատմագրութիւն եվ յուշագրութիւն), Թեհրան, 1991, էջ 18:

[8] **Հախնազարյան Հ.,** Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 14:

[9] Տե՛ս **Լալայեան Ե.,** Ազգագրական Հանդէս /կիսամեայ պատկերազարդ/ Առաջին տարի, Ա գիրք, Շուշի, տպարան Ա. Մահտեսի-Յակոբեանց, 1895, էջ 19:

Քրիստոնեությունից հետո Գողթնում երկար ժամանակ պահպանվել են հեթանոսական հնաբույր երգերն ու զրույցները: Իսկ քրիստոնեության շրջանում գավառն առանձնանում էր կանոնավոր և բարձր մակարդակով ուսուցանվող եկեղեցական երաժշտությամբ: Գողթնի նշանավոր դպրեվանքերում՝ Ագուլիսի, Ջուղայի, Ցղնայի, երաժշտությունն ուսումնասիրվում էր որպես գիտություն՝ երաժշտության պատմության և տեսության ուսուցմամբ, հատուկ երգարանների օգնությամբ: Գողթան Խոսրով Իշխանի որդին՝ Վահան Գողթնեցին, VIII դարի շարականագիրներից էր: Նրա տաղերն ու շարականները բանաստեղծական գեղարվեստականությամբ աչքի ընկնող երևույթ էին: Ըստ ավանդույթի՝ Վահան Գողթնեցու քույրը՝ Խոսրովիդուխտը, հայ առաջին կին բանաստեղծ-երաժիշտն էր: «Բամբիռը՝ Գողթան երգիչների գործիքն էր»՝ ըստ Հովհաննես կաթողիկոսի[10]:

Ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության զարգացման համար կարևոր էր Գողթան գավառի աշուղների ու երգասացների գործունեությունը, որոնցից ամենատաղանդավորն էր Նաղաշ Հովնաթանը:

Պատահական չէ Արամ Խաչատրյանի հետևյալ դիտարկումը. «…հայերը, չնայած զանգվածային բնաջնջման, թշնամիների հալածանքներին, կարողացել են պահպանել ազգը, լեզուն, մշակույթը և կրոնը: Հարկ է ասել, որ հայկական մշակույթը դարերի խորքից է գալիս, ինքնատիպ է, և նրան բնորոշ են բացարձակապես ինքնօրինակ գծեր»[11]:

Գողթնից էր սերում Կոմիտաս վարդապետը, որի պապերը XVII դարի վերջերին Ցղնա ավանից գաղթել էին Կուտինա:

Կոմիտաս վարդապետն ինքնակենսագրության մի տարբերակում գրում է. «Սողոմոնեանները եւ Քիւթահիայի հայ հին ընտանիքները գաղթել են Գողթն գաւառի Ցղնայ գիւղից ԺԷ դարու վերջերում»[12]: Գողթն երգիչների պատվին Կոմիտաս վարդապետը Պոլսի իր 300-հոգանոց երգչախումբը կոչել էր «Գուսան»:

Վարդապետը գրում էր. «Խումբս, որի անունը «Գուսան» եմ դրել (հին Գողթան հայ երգիչների, ժողովրդական աշուղների անունով է, որ

---

[10] Հայկական երաժշտութեան մասին. Գործիքներ, ԱՀ 3: **Փափազեան Վ.**, 1898, Գ գիրք, Թիֆլիս, էջ 350-358:

[11] **Խաչատրյան Ա.**,Նամակներ, Ե., 1983, էջ 160:

[12] **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, էջ 59:

Գուսան էին կոչվում)»[13]: Գողթան երգիչների դյուցազներգերն ու նրբահյուս շարականները վարդապետի երաժշտության մեջ իրենց նոր շնչառությունն ստացան: Գուսանների ու վիպասանների քաղցրահունչ, գունագեղ մեղեդիները վերաիմաստավորվեցին խաչատրյանական արվեստում: Արամ Խաչատրյանի ծնողները նույնպես հինավուրց Գողթան գավառից էին: Վերին Ազա գյուղից էր կոմպոզիտորի հայրը՝ Եղիա Խաչատրյանը, որն ամուսնացել էր նույն գավառի Ներքին Ազա գյուղում ծնված Ղումաշի հետ: Ազա գյուղը պատմական գավառի հայաբնակ շեներից էր: Ենթադրվում է, որ նրանց տեղը նախկինում եղել է Ազատ անունով քաղաքը, որը կործանվել է թշնամիների ավերիչ հարձակումներից[14]: Ակամա վերհիշում ես անմահ «Սպարտակ» բալետը՝ իրապես ըմբռնելով այդ կոթողի ենթատեքստում թաքնված ազատասիրական վիթխարի ուժը, «խաչատրյանական երաժշտական աշխարհի ժողովրդա-ազգային տարերքը»[15]: «Ինչ վերաբերում է հայ ժողովրդին ծառայելուն՝ իմ ամբողջ ստեղծագործությունը, իմ ամբողջ կյանքը պատկանում է հայ ժողովրդին», - պնդում էր Ա. Խաչատրյանը[16]:

«Յայտնի է քեզ յերգս վիպասանց, զոր պահեցին ախորժելով, որպես լսեմ, մարդիկ կողմանն գիաւետ գաւառին Գողթան», - գրում էր Մովսես Խորենացին V դարում[17]:

XX դարում ևս չդադարեց հնչել Գողթան գավառի երգիչների քաղցրահունչ քնարը: Անհերքելի է, որ և՛ Կոմիտաս վարդապետը, և՛ Ա. Խաչատրյանը եկել են հանճարներ ծնող հողի նույն ակունքից, ասես ի վերուստ գրված մի ծրագրով: Նրանց համար ժողովրդական փիլիսոփայությունն ու երգը եղել են ստեղծագործության կենարար աղբյուր: Ժողովրդական երաժշտությունը՝ ֆոլկլորը, Կոմիտասի ստեղծագործության հիմքն է, Խաչատրյանի համար նույնպես մեծագույն գեղարվեստական արժեք է: «Ե՛վ Կոմիտասը, և՛ Խաչատրյանը ձգտել են զգալ, վերահասու լինել, իմաստավորել ժողովրդի գեղարվեստական պատկերացումների, երաժշտական մտածողության, երաժշտական լեզվի բովանդակ համակարգը այնպիսի խորությամբ, որ դրանք դառնան իր սեփական մտածողության ու լեզվի

[13] **Կոմիտաս Վարդապետ**, Նամականի, Ե., 2009, էջ 209:
[14] Տե՛ս **Հախնազարյան Հ.**, Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 307:
[15] Բնորոշումը՝ Նիկողոս Թահմիզյանի:
[16] **Խաչատրյան Ա.**, Նամակներ, Ե., 1983, էջ 115:
[17] **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 158:

բաղադրիչներ…ժողովրդական երաժշտությունը Խաչատրյանի համար մայրենի լեզու է», - գրում է Տիգրանովը[18]:

Ժողովրդական երգից էին բխում, եթե փորձենք ընդհանրացնել, երկու մեծերի ստեղծագործության առանձնահատկություններն ու առնչությունները՝ գեղարվեստական կերպարի հարցը, թեմատիկ զարգացման սկզբունքները, լադահարմոնիկ հարստությունը: Լադը հանդես է գալիս որպես ձևակազմական և կառուցողական գործոն: Ազգային լադամտածողությամբ են պայմանավորված ինտոնացիոն-հարմոնիկ նոր փոխհարաբերություններն ու ոչ ավանդական գործառութային կապերը:

Մեր կարծիքով, և՛ Կոմիտասի, և՛ Ա. Խաչատրյանի կոմպոզիտորական մտածողության մեջ կարևոր հատկանիշներից մեկը նաև բազմաձայնությունն է: Կոմիտասն իր ժողովրդից ժառանգություն ստացավ այնպիսի մոնոդիա, որը կարող էր ենթարկվել պոլիֆոնիկ զարգացման: Առանց բազմաձայնության անհնար էր տեսնել հայ պրոֆեսիոնալ երաժշտության հետագա զարգացումը:

Կոմիտասը հայ երաժշտության մեջ դարձավ պոլիֆոնիկ նոր մտածողության, Թահմիզյանի բնորոշմամբ՝ «մեղեդիակերտ բազմաձայնության» հիմնադիրը, կոմիտասյան պոլիֆոնիան նաև կարևորագույն արտահայտչամիջոց է, որը հիմնված է ժողովրդական ստեղծագործությունից եկած հնարանքների վրա: Պոլիֆոնիկ այդ հնարանքների շարունակողը գեղարվեստական նոր վերաիմաստավորմամբ Արամ Խաչատրյանն էր[19]:

Կոմիտասի դրած հիմքերով, կոմպոզիցիոն սկզբունքների արդիականացմամբ են պայմանավորված խաչատրյանական (և հետխաչատրյանական դպրոցի բազմաթիվ ներկայացուցիչների) երաժշտական կտավների ազգային լադամտածողության վրա խարսխված հնչյունային ինքնատիպ հյուսվածքների գերակայությունը, ինտոնացիոն բարդ կառուցվածքները, ժողովրդական ավանդույթներից եկած դիմող ձայնի և ձայնառության կիրառման սկզբունքները, պոլիտոնալության ու պահված հիմնաձայնի

---

[18] **Տիգրանով Գ.,** Հաստատելով սոցիալիստական ռեալիզմի արվեստը (Սովետական արվեստ, 1977, հ. 6, էջ 18):

[19] **Чеботарян Г.** Полифония в балете Арама Хачатуряна «Спартак» («Известия» Академии наук Арм. ССР, 1959, N 6, с. 17-39).

առկայությունը: «Անահիտի» համարներից մեկում Կոմիտասը մանրամասն քննարկում է ձայնառության հարցը[20]:

Ինչպես նշեցինք, կարևորագույն հատկանիշը, որ կապում է Գողթան երգիչներ Կոմիտասին ու Խաչատրյանին, ժողովրդական մեղեդու մշակման սկզբունքներն են՝ հիմնված հայ երաժշտության լադային (լադային կամ մոդալ բանաձևերի, ասես անցյալի՝ Գողթան երգիչների մտածողությամբ հղկված) առանձնահատկությունների վրա: Դա կոմպոզիտորական վարպետություն է՝ խարսխված ազգային վառ նկարագրի ու բնորոշության վրա, դա մտածողության մի համակարգ է, որտեղ երաժշտական լեզվի բոլոր բաղադրիչները ենթարկված են հստակ օրինաչափությունների: Օրինակ, Ա. Խաչատրյանի Երգ-պոեմը՝ ջութակի և դաշնամուրի համար՝ «Աշուղների հիշատակին» (1929). մեղեդու հուզական ներգործությունը, թեմայի շարադրանքի իմպրովիզացիոն բնույթը, ժողովրդական գործիքների տեմբրերը վերստեղծելու կարողությունը, իմպրեսիոնիզմի աշխարհը տանող գունային-տեմբրային հնչերանգները, ռիթմիկ ճկունությունն ու բազմազանությունը, դաշնամուրի նվագակցության հյուսվածքը (սեկունդ, կվարտ-կվինտային հարմոնիաների գերակայությամբ) մոտ է Կոմիտասի պարերի ձևակառուցողական առանձնահատկություններին: Ավելին, այս գողտրիկ երկը Կոմիտասի գործիքային մտածողության շերտերը բացահայտելու առաջին գեղեցիկ օրինակն է (եթե նշենք, որ Կոմիտասի դաշնամուրային պարերն ամբողջապես հրապարակվել են միայն 1925 թվականին, իսկ լավագույն տպագրությունը Մոսկվայում էր 1939-ին):

Խաչատրյանը սիրում էր թառի հնչողությունը, Կոմիտասն իր դաշնամուրային «Ունաբի», «Շուշիկի», «Երանգի» պարերում առանձնահատուկ շեշտում է հենց «թառի ոճը»: Ա. Խաչատրյանն ինքն է խոստովանել, որ «թեման ստեղծել է ժողովրդական մեղեդու վերաիմաստավորման, նրա ընդլայնման և զարգացման ճանապարհով»[21]: Մենք այստեղ չենք անդրադառնա Կոմիտասի աշուղական երգերի գրառմանն ու հայ երաժշտա-պրոֆեսիոնալ արվեստի հանդեպ ունեցած նրա վերաբերմունքին[22]:

---

[20] «Անահիտ», Է տարի, թիվ 1-2-3, Փարիզ, 1936, էջ 47, տե՛ս նաև **Կոմիտաս Վարդապետ**, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, էջ 237:

[21] Սովետական Հայաստանի երաժշտությունը. Հոդվածների ժողովածու, Ե., 1973, էջ 146:

[22] **Կոմիտաս**, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1979, էջ 52:

Կոմիտասը հայ երաժշտության զարգացումը տեսնում էր ոչ միայն ազգային, այլև եվրոպական փորձի յուրացման ճանապարհով: Կոմիտասի կոմպոզիտորական սկզբունքների շարունակող Արամ Խաչատրյանը՝ իր ժամանակին համաքայլ, ժողովրդական երգը միահյուսեց գործիքային-մեծակտավ՝ ասել է թե եվրոպական կոմպոզիտորական մտածողությանը: Դա զարգացման մի նոր աստիճան էր: Կոմիտասի ավանդույթների սիմֆոնիզացում. գաղափարական մեծ հայեցակարգի ստեղծում, որտեղ ժողովրդական մելոսը հնչում է կոնցերտի ձևակազմությամբ: Խաչատրյանը ստեղծեց այն ժանրերը, երաժշտարվեստի մեծամասշտաբ այն գործերը, որոնցում Կոմիտասը չհասցրեց գրել[23]: Կոմիտասին անձամբ ճանաչած Միխայիլ Գնեսինը առանձնակի հետաքրքրություն ցուցաբերեց երիտասարդ Արամ Խաչատրյանի արվեստի ազգային ակունքներին:

Խաչատրյանը դեռ վաղ տարիքում յուրացրեց և որդեգրեց Կոմիտասի գեղարվեստական սկզբունքները: Պատահական չէր, որ 1932-ին Մաքսիմ Գորկու տանը՝ Գորկիում, երբ Ա. Խաչատրյանը հանդիպեց Նոբելյան մրցանակակիր, ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանին (որը ճանաչել ու հիացել էր Կոմիտասի արվեստով), նրան որպես բնիկ հայ երաժշտության անթոլոգիա նվիրեց Կոմիտասի Ազգագրական ժողովածուն[24]:

Ա. Խաչատրյանը, որպես հայ ժողովրդի հոգևոր հարստության, կոմիտասյան ավանդույթների օրինական ժառանգորդ, աներկբայորեն ընդունում էր Կոմիտասի մեծությունը: Իր հեղինակած «Հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը» հոդվածում՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին, նա գրում է. «Ես Կոմիտասի կյանքի գործը կնմանեցնեի հիմք գցելուն: Այդ հիմքը լուսեղեն է, ներդաշնակ և միաժամանակ ամուր խարսխված հարազատ հողին: Ես կարծում եմ, որ ամեն մի հայ երաժիշտ իր սրբագույն պարտքը պիտի համարի Կոմիտասի ավանդները զարգացնելը, ավանդներ, որ իր ստեղծագործությամբ է մեզ կտակել Կոմիտասը: Երբ լսում եմ Կոմիտասի երաժշտությունը, շոգից ծարաված ճամփորդ եմ դառնում, որ պապակած շուրթերով խմում ու խմում է կարկաչահոս աղբյուրից: Կոմիտասի երաժշտությունն էլ հենց այդ աղբյուրի պես է. կենարար, մա-

[23] **Զուրաբյան Ժ.,** Մոնոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Ե., 2014, էջ 136:

[24] **Խաչատրյան Ա.,** Նամակներ, Ե., 1983, էջ 126, 203:

քուր ու բանաստեղծական... Կոմիտասը եղել է, կա ու կմնա իմ ամենամեծ ուսուցիչը»[25]:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ՍԱՀԱԿՅԱՆ Լ.Զ.

Ամփոփում

Գողթան գավառի հարուստ երգային-բանաստեղծական արվեստը թե՛ Կոմիտասի, և թե՛ Խաչատրյանի մոտ դարձել է ազգային կոմպոզիտորական մտածողության հիմք ու ավանդույթ: Ժողովրդի պատմական անցյալի վերաիմաստավորմամբ է ձևավորվել նրանց ստեղծագործական սկզբունքների ամբողջությունը, գեղագիտական հայացքների համակարգը: Մեր ուսումնասիրություն մեջ դիտարկվող Կոմիտաս վարդապետի ստեղծագործության կոմպոզիցիոն սկզբունքներն ու օրինաչափությունները գեղարվեստական նոր վերադրսևորումներ են ստացել Արամ Խաչատրյանի արվեստում:

Բանալի բառեր՝ Կոմիտաս վարդապետ, Արամ Խաչատրյան, Գողթան գավառ, կոմպոզիտորական դպրոց, ազգային մշակույթ, ժողովրդական երգ, ձայնակարգային համակարգ:

ПЕВЦЫ ГОХТАНА: КОМИТАС ВАРДАПЕТ (АРХИМАНДРИТ) И АРАМ ХАЧАТУРЯН

СААКЯН Л.З.

Резюме

Богатое музыкально-поэтическое искусство провинции Гохтан послужило основой национального композиторского мышления как у Комитаса, так и у Хачатуряна. Переосмысление исторического прошлого армянского

[25] Արամ Խաչատրյան՝ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը (Սովետական արվեստ, 1969, հ. 10, էջ 1-2):

народа сформировало их творческие принципы и систему эстетических взглядов.

Рассматриваемые в нашем исследовании композиционные принципы и закономерности, присущие творчеству Комитаса, обрели новое воплощение в искусстве Арама Хачатуряна.

Ключевые слова – Комитас вардапет, Арам Хачатурян, провинция Гохтан, композиторская школа, национальная культура, народная песня, ладовая система.

SINGERS OF GOGHTN: KOMITAS VARDAPET (ARCHIMANDRITE) AND ARAM KHACHATURIAN

L. SAHAKYAN

Abstract

The rich musical and poetic art of Goghtn became the basis of national composer thinking both for Komitas and Khachaturian. Their creative principles and the system of aesthetic views were shaped by means of rethinking the historical past of the Armenian people. The article studies Komitas Vardapet's compositional principles and patterns, which gain a new artistic interpretation in Aram Khachaturian's art.

Key words – Komitas Vardapet, Aram Khachaturian, canton of Goghtn, composer school, national culture, a folk song, a modal system.